ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-02

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 2 նիստի

05-ը հունիսի 2024թ.

ԱԺ 314 սենյակ, ժ.17:00

Ս.թ. հունիսի 5-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանների ուսումնասիրություն,
2. Մրցութային խորհրդի անդամների կողմից հավակնորդների վերաբերյալ զեկույցների ներկայացման բաշխումը,
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի հարցազրույցի փուլի անցկացման օրվա, ժամի և տեղի սահմանում:

Խորհրդի հինգ անդամներից նիստին մասնակցում էին չորսը՝ Արուսյակ Զուլհակյանը, Սոնա Խալաֆյանը, Նինա Փիրումյանը, Արթուր Հովսեփյանը: Նիստը վարում էր՝ Արթուր Հովսեփյանը:

Նիստին մասնակցում էր նաև ԱԺ աշխատակազմից Դիաննա Աթոյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

Օրակարգի 1-ին հարց	Ա. Զուլհակյանը ներկայացրեց Հրաչյա Աբրահամյանի, Վաղարշ Աղաբեկյանի, Նարինե Ավետիսյանի և Նվարդ Վարդանյանի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները :
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը ուսումնասիրեց Հրաչյա Աբրահամյանի, Վաղարշ Աղաբեկյանի, Նարինե Ավետիսյանի և Նվարդ Վարդանյանի բարեվարքության ստուգման նպատակով իրականացված հարցումների պատասխանները:*
Օրակարգի 2-րդ հարց	Խորհուրդը որոշեց անցկացնել վիճակահանություն և պարզել թե խորհրդի անդամներից յուրաքանչյուրը որ հավակնորդի վերաբերյալ զեկույցով է հանդես գալու:

Խորհրդի որոշումը	*Խորհուրդը միաձայնությամբ որոշեց, որ Հրաչյա Աբրահամյանի վերաբերյալ զեկույցը կներկայացնի* Նինա Փիրումյանը, *Վաղարշ Աղաբեկյանի վերաբերյալ զեկույցը կներկայացնի* Արթուր Հովսեփյանը, *Նարինե Ավետիսյանի վերաբերյալ զեկույցը կներկայացնի* Արուսյակ Ջուլիակյանը *և Նվարդ Վարդանյանի վերաբերյալ զեկույցը կներկայացնի* Սոնա Խալաֆյանը*:* *Կողմ 4 դեմ 0*
Օրակարգի 3-րդ հարց	Հաշվի առնելով, որ խորհուրդը ուսումնասիրեց Հրաչյա Աբրահամյանի, Վաղարշ Աղաբեկյանի, Նարինե Ավետիսյանի և Նվարդ Վարդանյանի բարեվարքության ստուգման նպատակով իրականացված հարցումների պատասխանները՝ որոշվեց սահմանել հարցազրույցի անցկացման օրը, ժամը և տեղը:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը որոշեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի հարցազրույցի փուլը անցկացնել հունիսի 7-ին ժամը 11:00-ին, Ազգային ժողովում, 114 սենյակում:* *Կողմ 4 դեմ 0*

Նիստը վարող՝ Ա. Հովսեփյան

Նիստի քարտուղար՝ Դ.Աթոյան